



ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱԼԱՄԴԱՐՅԱՆ

(Առաջնորդական փոխանորդ
Արարատյան քեմի)

ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՄԲԱՏՅԱՆ



ասնիններորդ դարի մեր մշակութի զարգացման պատմության մեջ իր համեստ և պատվավոր տեղն ունի Մայր Աթոռի միաբանությունը իր կրոնաբարոյական, մանկավարժական և պատմա-բանասիրական վաստակով:

Տասնիններորդ դարի վերջին հիսնամյակում Մայր Աթոռի բազմարդյուն և երախտաշատ միաբանների շարքում իր գրական և բանասիրական վաստակով, իր ուսումնականությամբ և վանական-վարչական գործունեությամբ, շատ միաբանների հետ աշքի է ընկնում նաև հանգուցյալ Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանը:

Սմբատյանի ժամանակակից և Մայր Աթոռի միաբան Վահան վարդապետ Բանտամյանը իր ձեռագիր «Ճարդեգրություններ»-ի մեջ նորա մասին գրել է հետևյալը. «Մեսրոպ եպիսկոպոս Սմբատյանց, հին նախիջևանցի, կարճահասակ և հաստակազմ մարդ, գիտեց գրոց լեզու... տեղյակ է կրոնին և սրբազն պատմության, ընթերցանու, բավական ժիր և գործունյա, բարեսիրու...»¹:

Իր կյանքի և գործունեության մասին մանրամասն տեղեկություններ է հաղորդում նաև ինքը՝ Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանը իր «Նկարագիր Շամախւոյ թեմի» մեծածավալ աշխատության 555—567 էջերում:

Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանը ծնվել է 1833 թվականի մարտի 10-ին Հին-նախիջևանի գավառի Փորադաշտ գյուղում, բահանայի ընտանիքում: Ս. Էջմիածնի ժա-

¹ Տե՛ս Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռ, թ 8899.

ունգավորաց դպրոցն է ընդումվել 1847 թվականի մարտի 1-ին: Ժառանգավորաց վարժարանում նրա ուսուցիչներն են եղել Մակար վարդապետը (ապա կաթողիկոս) և Հովհաննես եպիսկոպոս Շահնաթումյանը՝ դպրոցի վերատեսուչ: Նույն դպրոցում ուսման ընթացքն ավարտելուց հետո 1851 թվականի սեպտեմբերի 16-ին նա սունում է դպրության շրու աստիճանները Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, երջանկահիշատակ Տ. Ներսես Ե. Աշտարակեցու ձեռամբ և 1856 թվականին ձեռնադրվում է սարկավագ Մակար եպիսկոպոսից: Մի տարի հետո էլ, 1857 թվականի հունիսի 16-ին, Պողոս եպիսկոպոս Մալխասյանից ձեռնադրվում է կուսակրոն քահանա և վերանվանվում Մեսրոպ (աշխարհական անունը եղել է Գրիգոր):

Կուսակրոն քահանա ձեռնադրվելուց հետո սկսում է Սմբատյանի վանական-վարչական և գրական գործունեությունը թի' Մայր Աթոռում և թի' գավառներում: Նա 1859 թվականին նշանակվում է «Էջմիածնի գավառի գործակալ», հին սովորությամբ ասած, միաժամանակ Մուլին Ս. Գևորգ վանքի վանահայր և Ս. Էջմիածնի վանական կառավարչության անդամ:

1862 թվականին կանչվում է ալելի պատասխանատու պաշտոնի, նշանակվելով նոր թայազետի և շրջակա 73 հայաբնակ՝ գյուղերի գործակալ, իր հոգեոր իշխանության սահմանների մեջ ընդգրկելով Քանաքեռից մինչև Թասարգելար տարածվող շրջանը:

Վերոհիշյալ կարեոր պաշտոնն ստանձնելիս, Մեսրոպ վարդապետը գումար է. «Ինձ հանձնված Գեղարքունյաց գործակալության պաշտոնը հարմար առիթ համարեցի իմ ցանկության, ուղևորության դիպվածները և

Գեղարքունյաց գավառի ստորագրությունը ի դիր առնելոց:

Եվ իսկապես, նույն թվականից նա պիտ նականի բարեխմազությամբ ակտում է նյութեր հավաքել իր «Տեղագիր Գեղարքունի ծովագարդ գաւառի» դրա համար և հրատարակում այն 1875 թվականին Ս. Էջմիածնի տպարանում։ Սբառոյանի վերոհիշյալ գիրքը արժեքավոր է աղջապրական-տեղա-

սին։ Նա այդ գիրքը գրելիս օգտվել է մեր մատենագրությունից, ինչպես նաև Հովհաննես եպիսկոպոս Շահիսթունյանից և Մ. Թաղիադյանից։

Հայ պատմա-բանասիրական գրականության մեջ Մեսրոպ արքեպիսկոպոս Մմբատյանի անունը անխզելիորեն կապված է Կովկասում բնեուագիր արձանագրությունների հավաքման և հրատարակության շնորհակալ



ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՄԲԱՏՅԱՆ

(Լուսանկարված 1895 թ.)

գրական տեսակետից՝ նոր Բայազետի պատմության ուսումնասիրության համար։ Գըրքում մանրամասն և արժեքավոր տեղեկություններ կան ծովագարդ գավառի, վանքերի (Սևան), եկեղեցիների, ավանների, գյուղերի, գյուղացների, ժողովրդի սովորությունների, կենցաղի և նիստ ու կացի մա-

աշխատանքի հետ։ Նա հայտնաբերել է և հավաքել 1862—1863 թվականներին Գեղարքունի ծովագարդ գավառի բնեուաձև արձանագրությունները, ինչպես նաև ելարի, Աղամիանի և Ալիշալուի արձանագրությունները և հրատարակել Մոսկվայում լույս տեսնող «Համբաւաբեր Ռուսիոյ» հայ լրագրի մեջ 1863 թվականին։

² Մեսրոպ արքեպիսկոպոս Սբառոյանց, «Տեղագիր Գեղարքունի ծովագարդ գաւառի», Էջմիածնի, 1895 թ., էջ 4։

Ամեն մի գավառ շրջելիս, նա բարեխմազութեն փնտուհի է և հավաքել բնեուագիր արձա-

նազրություններ: Այսպես նա հավաքել է նաև Արմավիրի, Յոլակերտի, Երվանդակերտի, Շիրակի և այլ վայրերի արձանագրությունները, և այդ բոլորն ի մի հավաքելով կազմել է «Բևեռագրութիւն Արարատեան նահանգի» անոնով արժեքավոր աշխատությունը, որի համառոտ ուստերեն թարգմանությունը համարակել է Մոսկվայի Կայսերական համագիտական ժողովը 1895 թվականին:

Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանը գիտական կամ է պահպանել նաև Փարիզի գիտնականների, ինչպես նաև Վենետիկի Մխիթարյան հայրերի հետ: Փարիզում հայտնի բանասեր Կ. Բասմաջյանը իրավամբ սրբազնին անվանել է «անիոնց հավաքով Կովկասի Տուպյան բենեափանդակ արձանագրությանց»³: Բացի այդ, Սմբատյան սրբազնը իր գոտած բենեափիր արձանագրությունները համարակել է նույնպես «Արարատ» ամսագրի 1896 թվականի և «Բազմավէճ»-ի 1897 թվականի համարներում:

Զափազանց մեծ է և շորհակալ է միանական մեծավաստակ գիտականի անխոնց աշխատանքը համաշխարհային բենեափանդակ գիտության մեջ: Սմբատյանի վաստակը պատիվ է բերում Մայր Աթոռ Ս. էջմիածնին և միաբանության:

Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանը 1892 թվականին Մոսկվայի Կայսերական համագիտական ժողովը կողմից ընտրվում է ընկերության անդամ: Դա փոքր պատիվ չէր եղինական գիտնականի համար:

Որպես առաջնորդ կամ վանահայր, որտեղ էլ գնացել է Սմբատյանը, նա միշտ աշխատել է և հավաքել անխոնց, անձանձրույթ:

1865 թվականին Սմբատյանը նշանակվում է նվիրակ՝ Աստրատականի թեմակալ առաջնորդ Տ. Գևորգ արքեպիսկոպոս Վեհապետյանի կողմից: Առիթից օգովիկով նա շրջադարձուն է կատարում եղոյ, Սարմատ, Ուրմիա, Մարաղա և թեմի հայաբնակ գյուղեր և ապա գրի է առնում իր տպավորությունները: Վահան Վարդապետ Բաստամյանի իր «Ճարեգրություններ»-ի մեջ վկայում է այդ մասին: «Եսում են, թի սա (Սմբատյանը—Վ. Վ. Գ.) տնի գրած մի ճանապարհորդությունն Պարսկաստանի մեջ կատարած, ուր շատ հետաքրիք տեղեկություններ կան»⁴:

1866 թվականին Սմբատյանը նշանակվում է Տաթևի վանքի վանահայր, որտեղ և կազմում է Ստեփանոս եպիսկոպոս Օրբել-

³ Տե՛ս «Մանրամասն իր «Նկարագիր Ս. Կարապետի վանից Երմաջակայ և շրջակայից նորա», Տփդիս, 1904 թ., էջ 538—555:

⁴ Հայկական ՍՍԾ Պետական մատենադարանի ձեռ. N 8899:

յանի ձեռագիր պատմության հատուկ անունների ցանկը, ինչպես նաև վանքի ձեռագրերի ցուցակը և նույն վանքի վանահայրերի համարուտ «գավազանագրքը», սկսած Գրիգոր Տիելեացուց մինչեւ իր ժամանակը:

1867 թվականին նա գտնվում է Նախիջեվան քաղաքում, այցելում է շրջանի 88 հայրանակ գյուղերը և գրում է «Գաւառացոյց Նախիջեանաց» աշխատությունը, որի մասին Հ. Ալիշանը գրում է հետեւյալը. «...Գալով Զեր Նախիջեանաց գաւառացուցին, դա իմ Ալրարատէս գուրս մնաց, միայն Շարուր գաւառակը կը պարագրէ, որոյ վրայօք շատ տեղեկութիւն չունիմ. իսկ Զեր Նախանակեալ գաւառոց ծանօթութիւնքն ի փոանք ճանապարհորդէն և ի ի Ցուրպաց (յորս չեն գտնուիր անուանք գիտից և վանորէից, այլ միայն սովորական կամ կարաւանի ճամբու վրայ եղած են) ըստ կարի ջանամ հաւաքել, և յատ Զատկին առաքելու»⁵:

Երբ 1868 թվականին նշանակվում է Երեւանի փոխ-թեմակալ, որպես ուսումնասեր մարդ, բարեկարգում է Երեւանի թեմական դպրոցը⁶:

1870 թվականին Սմբատյանը Գևորգ Դ-ի կողմից նշանակվում է Սինոդի անդամ և 16 տարի շարունակ մնում է այդ պաշտոնում մինչև 1887 թվականը: Բացի Սինոդի վարչական աշխատանքների կատարմանը մասնակցելուց, նա լծվում է նաև գրական աշխատանքի: Գևորգ Դ-ը գնահատելով նրա վարչական և գրական աշխատանքները, արժանացնում է նրան եպիսկոպոսական աստիճանի 1877 թվականին:

Սմբատյանը ցուցագրագրում է Մայր Աթոռու նորակերտ թանգարանի իրերը, իսկ 1881 թվականին, Գևորգ Դ-ի հրամանով և օշականցիների օժանդակությամբ, կառուցում է Զալականի Մեծ Սուրբի եկեղեցին:

Հ. Ալիշանը միշտ նամակագրության մեջ է եղել նրա հետ: Հայկական ՍՍԾ Պետական մատենադարանում գտնվում են Ալիշանի 22 նամակները, բոլորն էլ հասցեագրուված Սմբատյանին և կրում են զուտ հայագիտական բանասիրական բնույթ: Այդ նամակների ընթերցումով մեզ հայտնի է դառնում, որ Սմբատյանը Կովկասում հանդիսացել է Հ. Ալիշանի պատմա-բանասիրական երկերի տարածողը: Հ. Ա. Ալիշանը գնահատել է նաև Սմբատյանի աշխատանքները հայագիտության ասպարեզում և նրանից

⁵ Հայկական ՍՍԾ Պետական մատենադարան, Արևիկ Գյուտ եպիսկոպոսի, Թղթապանակ Հ. վակերագիր Յ:

⁶ Տե՛ս «Մանրամասն «Ճիմամենակ թեմական դպրոցին Երևանայ», 1868, 1869, 1870. թվերը, էջ 109—120,

խնդրել է նյութեր իր «Այրարատ»-ի և այլ երկասիրությունների համար⁷:

Մակար Ա. կաթողիկոսի օրով, 1882—1886 թվականներին, Սմբատյանը նշանակվում է Գևորգյան ճեմարանի վերատեսուչ:

Մակար Ա. երջանկահիշատակ կաթողիկոսի հրամանով Սմբատյանը 1887 թվականին նշանակվում է առաջնորդ ուժիձակին հայոց Շամախու (Բաքվա) և Անդրկասպյան աշխարհի: Առաջնորդպական ծանր պաշտոնի մեջ, նա ժամանակ է գտնում թղթակցելու պրոֆ. Ք. Պատկանյանի հետ 1884 թվականին Քերովքի Պատկանյանը նամակագրության մեջ էր Սմբատյանի հետ: Նա իր եղունացու հրատարակության կապակցությամբ խնդրել է նրանից հետեւյալը. «Թիմում եմ դեպի Զեզ, մի նոր խնդրություն: Դուք գիտեք, ես մի քանի տարի առաջ տպեցի Մովսես Խորենացու աշխարհագրությունը հանդերձ ուս թարգմանովիամբ, օրինակները պետք է լինեն այդտեղ (էջմիածին—Վ. Վ. Գ. Գ.): Եվ, իսկապես, Սմբատյանն ուղարկել է նրան նյութերը: Այդ ապացուցում են Մատենադարանում գտնված նրա նամակները:

Եվ անա նրա բարեկամ պրոֆ. Ք. Պատկանյանը քաջալերում է նրան իր նոր պաշտոնում և հետեւյալ խորհուրդն է տալիս. «Հուարլվ, որ այդ նոր նշանակությունը չի հեռացնի Զեր Սրբազնությունը այն սիպանկար խորագիրից և Ռուաստանի սահմաններում գտած արձանագրություններից, որու հետ ընդիշտ արդեն կապված է Զեր անունը»⁸:

Հ. Զ. Ալիշանն էլ է քաջալերում Սմբատյանին իր նոր պաշտոնում և խրախուսում նրան. «Երր իմացայ Սրբութեանդ կարգումն ի դիտապետութիւն Շամախու, փորձութիւն մի եկաւ ինձ՝ արդեօք շնորհաւորեմ թէ չէ, տարակուաելով, թէ որ հաճոյ է Զեզ, էջմիածնի բնակութիւն՝ եթէ այդ նոր վիճակի, յետոյ ընթերցայ ի լրագիրս Տիխիսու, այցելութիւնները ընդարձակ թեմիդ, զոր հոգեջան խնամօք պայծառացնես և պայծառանաս»⁹:

Եվ իսկապես պրոֆ. Պատկանյանի և մեծավաստակ գիտնական Հ. Զ. Ալիշանի հոյսաերն ի գերեւ շելան, և Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանը, բացի իր առաջնորդական տքնաշան պաշտոնից, ճենանարկեց նաև Ընկարագիր Շամախու թեմի» մեծածավալ աշխատությանը, որը և տպագրեց 1896 թվականին, Թիֆլիսում: Հիշյալ ուսումնասիրութիւն 13:

⁷ Հայկական ՍՍՌ Պետական ժամանակարան, Արևիկ Գլուխ եպիսկոպոսի, թղթապահակ 2, վավերագիր 30:

⁸ Նույն տեղում, վավերագիր 33:

⁹ Նույն տեղում, վավերագիր 33:

¹⁰ Նույն տեղում, վավերագիր 13:

թյան մասին մեծ գովեստով է խոսում Ալիշանը իր նամակներից մեկում. «Սիրալիր շնորհակալութեամբ ընդունեցայ և հաճութեամբ ու զուարձութեամբ ընթերցայ Շամախիդ... Շատ տեսակ իրաց տեղեակ կ'ընէ և ծանուցիլ անձանց... նու ինձ պիտանի տեղեկութիւնք գտայ ի գրքիդ և քանի մի բանի աւելի այլ փափազիմ և խնդրեմ, որոց մինը հիշածդ երես 86 Միքայէլ Կաթողիկոսի իր ժամանակին եղած հայոց վանքերուն թիմ. այդ որևէ գրուածքի փափազիմ գաղափարը:

Եթէ գտնուին ի Յայսմատուս յատովկ կողմանց լիշտակ կամ վկայաբանութիւնք նոր նահատակաց Տելիպահի (երես 29) եղալի և Անդրէի (երես 143):

Երես 467 լիշտած նախիջևանի թումանը՝ ըսել է շրջավայրերու, մօտիկ սահմանները...»¹¹

Վերոգրյալ մեշքերումը ապացուցում է, որ Սմբատյանը մանրագնին ուսումնասիրել է Շամախու թեմի նկարագրությունը իր բոլոր կողմերով, և իրավամբ բարձր գնահատականի է արժանացել նրա հիշյալ գործը բանասերների և հատկապես Հ. Ալիշանի կողմից, իր բովանդակած հարուստ նյութերի համար:

Մերուպ արքեպիսկոպոս Սմբատյանը ունի տպագրած աղջագրական-բանասիրական մի աշխատություն և Նկարագիր Սույր Կարապետի վանից երնջակաւ և շրջակայից նորա», որը տպագրվել է Թիֆլիսում 1904 թվականին: Սա ևս արժեքավոր աշխատություն է, որը պարունակում է Ս. Կարապետի մանրամասն պատմությունը իր հիմնագրը՝ ման օրից մինչև մեր օրերը: Սմբատյանն իրավացնորեն գրում է առաջաբանում. «Ճշրաէր իմ կարդալ և իմանալ թէ Երնջակայ Ա. Կարապետի վանիքը ինչ մեծ ծառայութիւնն է արել ազգին իրեր մեծահոշակ զպրոց, իմանալ թէ ինչ արժանաւոր մարդիկ է տունը եկեղեցւոյն, իմանալ թէ ինչ մեծ աշխատութեամբ առաջն է առել ունիթուական յարձականց...»¹²:

Ուզագրավ է Սմբատյանի անտիպ աշխատություններից «Ժամանակագրութիւն»-ը, որը գտնվում է Հայկական ՍՍՌ Պետական ժամանակարանում № 449-ի տակ: Նա իր Նկարագիր Շամախու թեմի» աշխատության 564-րդ էջում՝ «Ժամանակագրության մասին գրում է. «Պատմական ժամանակա-գրութիւնն երեկոյ գիւտոց, անցից և գործոց, պատահարաց և այլն, սկսեալ ի 1800 ամից ցայս թիւ (1896) և շարումակի ցորչափ Աստուած յաշողէ ինձ»:

¹¹ Նույն տեղում, վավերագիր 21:

¹² Մերուպ արքեպիսկոպոս Սմբատյան, «Նկարագիր Ա. Կարապետի վանից», էլ Ա:

Սմբատյանի «Ժամանակագրութիւն»-ը պատմական արժեք է ներկայացնում նրանով, որ մասնամասնորեն նկարագրում է իր ժամանակի դեպքերն ու դեմքերը, Մատթեոս Ա. Գևորգ Դ. Մակար Ա. երջանկահիշատակ հայրապետների օրով Ս. էջմիածնում կատարված իրողությունները, տալիս է սինոդականների, առաջանորդների անունները և այլ անցուղարձերի պատմությունը¹³: Նա Ճեմարանի մասին շատ ճիշտ գնահատական է տալիս. «Հայոց ազգն այժմ կարօտի ոչ միայն միոյ Ճեմարանի, այլ և բազմաց համալսարանց, Ճեմարանաց, դպրանոցաց և դպրոցաց»¹⁴:

Սմբատյանի երազանքը իրականացավ մեր օրերում միայն, և հայ ժողովորդն այսորով միացում դպրոցներ, համալսարան:

Բացի հիշվածներից, Սմբատյանն ունի նաև ամսագրերում մասամբ կամ լրիվ տպագրված և կամ անտիպ մնացած հետևյալ աշխատությունները.

1) «Կենսագրութիւն պատմաբանօրէն Արմբաւ Ա. բագաւարի Հայոց թագաւորութեայ»:

2) «Տիեզերագրութիւն Վաղարշապատայ, Օշականայ և Աշտարակայ» (միայն Օշականին վերաբերվող մասը հարատարակվել է «Ճռաքաղյա ամսագրում»):

3) «Ստորագրութիւն Մոլինայ Ս. Գևորգայ վաճից, Յովհաննու վաճից և Սաղմոսավահից»:

4) «Ստորագրութիւն նին բաղաքացն Յօլակերտի, Երևանդակերտի, Երևանդաշատայ և Բագարանի» (տպագրվել է «Արարատ» ամսագրի 1870 թվականի № 2-ում):

¹³ Հայկական ՍՍՌ Պետական մատենագրարանի ձեռ. № 449:

¹⁴ Նույն տեղում:

5) «Պատմութիւն Ս. Յակոբայ վաճուց Արկոսոյ և նշանաւոր աղբիւրի ցրոյն» (տպագրվել է «Արարատ» ամսագրի 1870 թվականի № 2-ում):

6) «Պաշար բանահայից, որ է աշխարհաբար բարող տէրունական տօների և հանդէների համար»:

7) «Էջմիածնի և շրջակայի իւր, որ է նկարագրութիւն էջմիածնի (անցեալ և ներկայան) և շրջակայի վաճուրէից»:

8) «Հրաէր ծողովրդոց Շամախոյ թեմի», (տպված 1893 թվականին Բաքվում):

Մեսրոպ սրբազնը, ինչպես ինքն է հաղորդում, ունեցել է նաև «...լրագրական յօդուածներ, գրուածքներ և այն հարիւրատը, սկսած 1860 թուականից, զանազան անարկայից վերաբերութեամբ այլ և այլ լրագրաց մեջ տպուած, զոր օրինակ. «Համբաւարեր Ռուակիյց, «Ճռաքաղյոց», «Արարատ» ամսագրի և այլն»¹⁵:

Սմբատյանը, բանասիրական պրատումներ կատարելու համար, 1910 թվականին մեկնել է Երևանալեմ և 1911 թվականի փետրվարի 9-ին վախճանվել է տեղի գերմանական հիվանդանոցում: Ս. Երուաաղեմի պատրիարքը և միաբանությունը նրան թաղել են արժանավայել շքով և հանդիսությամբ, եպիսկոպոսական հանգստարանում:

Մայր Աթոռի երիտասարդ Հոգմորականներին սրբազն պարտքն է միշտ վառ պահել մեր անցյալի բազմաբեկում և երախտագետ միաբանների գիտության շահը Մայր Աթոռում:

«Ճիշտական արդարոց օրնութեամբ եղիցին: Ամեն:

¹⁵ Տե՛ս «Նկարգիր Շամախոյ թեմի», էջ 566:

